ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> << դեկտեմբեր >> 2020թ. N ՄՊ/369-2020

ք. Արմավիր

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Գ. ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ N 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 24-ի N ՄՊ/360-2020 և 2020 թվականի հուլիսի 24-ի N ՄՊ/362-2020 որոշումները, <<Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ստելլա Օհանյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 13-ի <<Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> N 543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով սահմանված ժամկետի ավարտից հետո և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

28.08.2020

VERIFIED OCSP 28.08.2020 10:50:58 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի

ստ/№ 69-2020 որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Անդամներ՝

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Հանձնող՝

Օֆելյա Խաչատրյան - <<Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

Ընդունող՝

Հրանուշ Գրիգորյանին - <<Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ